

մահապատժի էր հասցնում: Կարճ թուրքական երկրում միայն արգարությունն էր գերիշխում: Այդ պատճառով, թուրքական գերիշխանության տակ մտած այլ ազգությունները շուտով համակերպվում էին այդ գերիշխանությանը ու հոգով կապվում նրա հետ: Վկայություն կա այն մասին, թե ինչպես անարգարությունը սպանված մի քրիստոնյայի համար տասնմեկ ներշնչություններ մահապատժի ստացան⁵⁶:

Պաշտոնական «թարիխ»-ում («պատմություն») ասվում է, որ իրր սամանյան կառավարման սխառմբ ապահովում էր յուրաքանչյուր հայատաճի պատիվը, ունեցվածքն ու անձը⁵⁷: Էս'ատ Ուրասը այսպես է ներկայացնում իր ընթերցողներին հայերի վիճակը սամանյան կայս-

րության մեջ. «Սամանյան հայերը հանգիստ կյանք էին վարում, զբաղվում էին առևտրով ու արհեստներով և շատ քոհ էին իրենց վիճակից: Զինվորական ծառայությունից ազատված լինելու հետևանքով, բազմապատկվեց նրանց ընտանիքների բանակը և ամենց նրանց նյութական բարեկեցությունը⁵⁸»:

Եվ այսպես. կեղծիք և զառանցանք, զառանցանք ու կեղծիք, — ահա էսաա Ուրասների և Ֆահրեդդին Կըրգիզլիների «պատմագիտական» մարդանքների բովանդակությունը: Պատմության նեկզափոխման նման օրինակը, իսկապես, արտաոսց և ծիծաղելի է:

Մ. ԶՈՒԱԼՅԱՆ

Յուզակ ծնուազրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, կազմեցին Օ. Նզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անրաբյան. ներածությունը՝ Ս. Նզանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Նրևան, 1965:

Հայագետների երկարամյա երազանքը՝ ձեռք բերել հավաքածուներով ամենահարուստ հնագիտականներից մեկի՝ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի ցուցակը, իրականացավ: Վերջերս լույս տեսավ Երևանի Մատենադարանի «Ձեռագրաց ցուցակ»-ը, որի տրպագրությունը տեքստով և լեզու տարի: Արդեն մեր տրամադրության տակ է ճաշակով ապագրված բավականին սովոր ու շքեղ կազմով գիրքը (51 մամուլից բաղկացած): Անկասկած, գրքի արտաքին տեսքը ակնհայտ կերպով ուղյց է տալիս այն մեծ նվաճումը, որ ձեռք է բերված պոլիգրաֆիայի բնագավառում հարևան եղբայրական Սովետական Հայաստանում: Հիշյալ «Ցուցակ»-ի կազմողներն են Օ. Նզանյանը, Ա. Զեյթունյանը, Փ. Անրաբյանը, իսկ խմբագիրները՝ Լ. Խաչիկյանը և Ա. Մնացականյանը:

Ձեռագրերով, վավերագրական աղբյուրներով հարուստ է հայ գրականությունը: Չնայած որ Հայաստանի վրայով անցել են հազար ու մի թոհ ու բոհ, ավերվել են շատ կոթողներ, այնուամենայնիվ փրկվել է ավելի քան 25.000 գրչագիր, որից շուրջ 10 հազարից ավելին հավաքվել է Երևանի Մատենադարանի հարկի տակ և պահվում է խնամքով: Մնացածը գտնվում է զանազան երկրներում՝ Երուսաղեմում, Վենե-

տիկում, Վիեննայում և այլուր: Հիշյալ վայրերում մոտավորապես այնքան ձեռագրեր կան, որքան Երևանի Մատենադարանում: Իսկապես, Երևանի Մատենադարանը «աշխարհի հնագույն և ամենահարուստ մատենադարաններից մեկն է» («Մատենադարանի «Ձեռագրաց ցուցակ», էջ 11):

Հայկական ձեռագիր-հավաքածուների ցուցակներ կազմելը վաղուցվա պատմություն ունի, և այդ իմաստով շատ բան է կատարված: Տպագրված նման ցուցակների մեջ փաստագրության և արժեքի տեսակետից աչքի է ընկնում Վիեննայի հավաքածուի «Մայր ցուցակ»-ը: Հիշյալ ցուցակը կազմել է հայտնի բանասեր Հակոբոս Տաշյանը: Գիրքը լույս է տեսել 1895 թվականին, հիմնականում՝ հայերեն լեզվով (գրքում գերմաներեն լեզվով զետեղված է ամփոփիչ ցուցակը): Ուրիշ հավաքածուներից կազմված ցուցակները ստեղծելիս բանասերները մեծ մասամբ հետևել են Վիեննայի հրատարակությանը՝ ընդօրինակել նրանից:

Բուն Հայաստանում նույնպես եղել են ցուցակ կազմելու փորձեր, մանավանդ էջմիածնում: 1863 թ. Թրիխիում Հակոբ Կարինյանցի ծախսով տպվեց «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի սրբոյ աթոռոյն էջմիածնի»,

⁵⁶ Նույն տեղում:

⁵⁷ «Tarih», հատ. III, էջ 3—4:

⁵⁸ Es'at Uras, Tarihle Ermeniler ve ermeni meselesi, էջ 182:

որի կազմողը Դանիել Շահնազարյանցն էր: Այս ցուցակը ուրիշներից տարրերվում է նրանով, որ սրա մեջ ձեռագիր մատյանները դասավորված են ըստ առարկայի, պահելով այրբենական կարգը:

Ամեն մի ձեռագիր զանազան կողմից է հետաքրքիր ուսումնասիրողի համար: Բանասերի համար, մեծ մասամբ, հատուկ նշանակություն ունի ձեռագրի բովանդակությունը, իսկ պատմաբանի համար՝ հիշատակագրությունները՝ հիշատակարաններ գրչի և ձեռագրի հետ կապված ուրիշ մարդկանց:

Սովետական Հայաստանում, անշուշտ, լավ սովորություն դարձավ, երբ գրչի հիշատակարանները առանձնացվում են մյուսներից և հատուկ կերպով են հրատարակվում ժամանակագրական կարգով: Այդ իմաստով առանձնապես պիտի նշվի այն խոշոր գործը, որ Մատենադարանի «Ձեռագրաց ցուցակ»-ի խմբագիր Լ. Խաչիկյանն է կատարել: Նա արդեն հրատարակել է 3—4 սովորածավալ հատոր: Սակայն ցանկալի կլիներ, բացի գլխավոր հիշատակագրություններից, նույն կերպով հավաքվեին ու հրատարակվեին և մնացած հիշատակարանները:

Հիշյալ նյութերն առանձնացնելը, որոնք սովորաբար գետնդրվում են ձեռագրաց ցուցակներում, Մատենադարանի «Ձեռագրաց ցուցակ»-ը կազմողների բոլոր շատ բանով թեթևացրեց: Դրա փոխարեն նրանք իրենց ուշադրությունը պիտի դարձնեին բովանդակության վրա և այն նկարագրեին հենց նույն ձևով, ինչպես որ ընդունված է հայ իրականության մեջ՝ Տաշյանից սկսած:

Մինչև օրս գոյություն ունեցող հայկական հավաքածուների ցուցակներն ուսումնասիրողներին օգնում էին, առաջին հերթին, այն բանով, որ ցույց էին տալիս, թե այս կամ այն ձեռագիրը ի՞նչ բովանդակություն ունի. ո՞ւմ, ի՞նչ երկասիրություն և ի՞նչ ծավալի գործեր է պարունակում: Հաճախ այն էլ էր նշվում, թե ինչպես է սկսվում այս կամ այն երկը, մի բան, որ նշանակություն ուներ դրանք դասավորելու, խմբավորելու համար: Բնագրերով հետաքրքրվողներին այդ չափավոր պահանջը լիովին բավարարում էր:

Այդ պահանջից ելնելով Մատենադարանի շրջանորեն հրատարակված նոր «Ձեռագրաց ցուցակ»-ը արդյոք օգնում է բանասերին, որը զբաղվում է խավորապես բնագրի հարցերով է հետաքրքրվում: Դժբախտաբար ցուցակը չնչին բանով է նպաստում բանասերին՝ խորապես իմանալու ձեռագրի բովանդակությունը, առանձնապես այն դեպքում, երբ նա գործ ունի բազմաբնույթ ժողովածուների հետ:

Ժողովածուում արդյոք կա՞ն, կամ լրիվ նըշված են հեղինակները կամ երկերը: Ոչ, եվ այդ են վկայում ներքոհիշյալ խոսքերը՝ «ի բանից Բարսղի, Գրիգորի (SIC! Գրիգոր անունը կրող հեղինակներ շատ կային) և այլոց», կամ՝ «ի բանից վարդապետաց (Դիոնիսիոս... այլի)»: Մի՞թե հետաքրքիր չէ, թե ովքեր են այդ «այլքը»:

Հաճախ նյութը, փաստերը թվարկելով, առվում է՝ «տաղը (Առ. Սյունեցի... անանուն)», «ճառը (Եպիփան, Փիլոն... անանուն)», «Քարոզը (Յովհ. Որոտնեցի... անանուն)» և քիչ բան է հասկացվում այդ ընդգծված բառերից: Մի՞թե դժվար էր նշել, թե ինչքան անանուն գործեր են տեղ գրավել ձեռագրում:

Ձի կարելի պատկերացնել «Ցուցակում» նըշված երկի ծավալը, որովհետև սովորաբար այդ հարցով «Ցուցակ»-ի կազմողները և խմբագիրները չեն հետաքրքրվում:

«Ցուցակ»-ում ձեռագրերի բովանդակություններ կայացնելիս մոռացության է տրվել այնպիսի մատենագիտական կարևոր նշանակություն ունեցող մի հանգամանք, թե նշված տվյալ նյութը երբեք տպվել է, թե՞ ոչ:

Նկատի ունենալով, որ ձեռագրերի բովանդակության բացահայտման համար վերահիշյալ անհրաժեշտ կողմերը անտեսված են, չի կարելի համաձայնել այն մտքի հետ, որ իբր թե ներկայացված «ընդգրկումով ու ծավալով կազմած ցուցակը... անտարակույս այն ևղյուղացնի հայագետների աշխատանք, մանավանդ վերը թրվարկած ուղեցույցների ու ֆարտաբանների, ինչպես նաև տպագրվող ձեռագրաց հիշատակաբանների. «Հայկական մատենագիտություն» ծավալուն աշխատության և այլ աղբյուրների օգտագործմամբ» (էջ 11—12. ընդգծումը իմն—ի. Ա.):

«Ցուցակ»-ում նյութերի ու հեղինակների ընդհանուր գծերով նշումը չի բացահայտում ձեռագրի բովանդակությունը, առանց որի «Ձեռագրաց ցուցակ»-ը կորցնում է իր նշանակությունը, նպատակը: Որևէ նյութի մասին գաղափար կազմել ցանկացողի համար այդքան աղբյուրների դիմելը, չհարկե, չի հեշտացնի նրա աշխատանքը:

Այս ամենից հետո հարց է ծագում, թե ի՞նչ նպատակ ունի նոր ձևով կազմված Մատենադարանի «Ձեռագրաց ցուցակ»-ը: Մի՞թե այն, որ ընդհանուր գծերով ցույց տրվի Մատենադարանի հավաքածուների մինչ այդ էլ հանրածանոթ հորստությունն ու նոխությունը: Բայց չէ՞ որ իր բովանդակությամբ Մատենադարանի «Ձեռագրաց ցուցակ»-ը համառոտ գույքամատյանի տպավորություն է թողնում, քան թե ցուցակի:

(այն էլ հասարակ ցուցակի, ուսերեն ասած՝ «опиcь»-ի, և ոչ թե իսկական ցուցակի, նույն լեզվով ասած «описаниe»-ի նման), որը եթե կազմված լիներ հայադիտության մեջ վաղուց ընդունված ձևով, ավելի կնպաստեր հայազետ-

ներին և իսկապես կղյուրացներ նրանց աշխատանքը:

Վրաց. ՍՍՌ ԳԱ քղրակից-անդամ. սյրոֆ.
Ի. ԱՔՈՒԼԱՉԵ
(Քրիիսի)

Армяно-русские отношения в первой трети XVIII в. Сборник документов. ч. I, под редакцией Ашота Иоаннисяна, составители: П. Т. Арутюнян, С. А. Тер-Авакимова, В. А. Акопян, издательство АН Арм. ССР, Ереван, 1964, 5+ 396 стр., цена 1 р. 30 коп.

Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դարի առաջին երեսնամյակում, փաստաթղթերի ժողովածու, մասն I, խմբ. Աշոտ Հովհաննիսյանի, կազմեցին՝ Պ. Տ. Հարությունյան, Ս. Ա. Տեր-Ավակիմովա, Վ. Ա. Հակոբյան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964, 5 + 396 էջ, գինը 1 ռ. 30 կ.:

Հայ-ռուսական հարաբերությունների հարցը միշտ էլ առանձնակի հետաքրքրություն է ներկայացրել և իր վրա գրավել պատմաբանների ուշադրությունը: Դեռևս անցյալ դարի վերջերին լույս տեսավ Կ. Սեչանցի «Сношения Петра Великого с армянским народом» (СПб, 1898) փաստաթղթերի սովորաժամով ժողովածուն, որտեղ առաջին անգամ գրեթե ամբողջական ձևով հրապարակ հանվեցին և հետազոտողների ուշադրությանը հանձնվեցին XVII դարի վերջի և XVIII դարի սկզբի հայ ազատագրական շարժման մեծ երախտավոր Իսրայիլ Յրու գործունեության հետ կապված փաստաթղթերը, գործունեությունը, որը նշանավորում էր հայ ազատագրական շարժման նոր ուղիները: Նույն աշխատության մեջ նկատեցր հրապարակեց նաև մի շարք վավերագրեր՝ XVIII դարի 20-ական թթ. պարսկական և թուրքական բռնապետությունների դեմ Արցախի և Սյունիքի հայերի մղած պայքարի վերաբերյալ: Սակայն այդ ժամանակաշրջանի իրադարձությունները նկատեցր ըստ արժանիության դեհանտել լիարդգացով և տուրք տալով պատմագրության իդեալիստական մտահայեցությանը, այն դիտեց որպես Պետրոս I-ի՝ քրիստոնյա հայ ժողովրդին ազատագրելու ձգտում, դանց առնելով բոլոր այն քաղաքական ներտումները, որոնք բնորոշ էին և երբեմն հարկադրական ժամանակի Ռուսաստանի արտաքին քաղաքականության համար:

Գիտական և բնօրինակ լայն հասարակայնության ուշադրությանը ներկայացվող ժողովածուն շատ է տարբերվում իր նախորդից: Նրա կարևոր արժանիքներից է այն, որ լրացված է բազմաթիվ նոր վավերագրերով, որոնք լուսա-

բանում են նաև հայ և ռուս ժողովուրդների տնտեսական հարաբերությունները զբաղեցնող ժամանակաշրջանում: Այդ հարցի վերաբերյալ ժողովածուում տեղ գտած 65 վավերագրերը մեզ պատկերացում են տալիս հայ-ռուսական առևտրական կապերի մասին, ցույց տալիս այն տեղը, որ գրավում էր Ռուսաստանը հայ վաճառականների առևտրական գործառնությունների մեջ: Առևտրական հարաբերություններից դատ ժողովածուի թեմատիկան բնագրվում է նաև հետևյալ բաժինները. «Հայերի քաղաքական հարաբերությունները Ռուսաստանի հետ պարսկական արշավանքի նախապատրաստման ժամանակաշրջանում», «Հայկական սղեւների հարաբերությունները Ռուսաստանի հետ պարսկական արշավանքների ժամանակաշրջանում և թուրքերի Անդրկովկաս ներխուժման նախապատրաստումը» և «1724 թ. ռուս-թուրքական պայմանագիրը և հայերի գինված դիմագրությունը թուրք զավթիչներին Անդրկովկասում 1724—1731 թթ.»: Դրախոսվող ժողովածուի առաջին մասում տեղ են գտել առաջին երկու բաժինները: Այստեղ բնագրված 163 վավերագրերի մոտ կեսը (81 փաստաթուղթ) առաջին անգամ է հրապարակվում և դառնում գիտական հասարակայնության սեփականություն:

Նկատեցր իր աշխատության մեջ չէր տվել հրապարակված փաստաթղթերի արխիվային հիմքերը: Ներկա հրատարակության մեջ լրացված է այդ բացը, ինչպես նաև կատարված են տեքստաբանական մի շարք նշումներ:

Ժողովածուի բեղաբազ ներածականում (հեղինակ ակադ. Ա. Հովհաննիսյան) քննադատական վերլուծման են ենթարկվում XVIII դարի առաջին երեսնամյակի հայ-ռուսական հարաբե-